Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՊԱՏՄԱԳԻՐ ՀԱԿՈԲ ՉԱՔԱՐՅԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՈՒՇԻ ՄԱՍԻՆ

Արցախի XVIII դ. երկրորդ կեսի և XIX դ. սկզբների պատմությունն արտացոլող սկզբնաղբյուրների շարքում կարևոր տեղ է գրավում Երուսաղեմի միաբան Հակոբ սարկավագ Զաքարյան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» պատմագրական երկը՝ գրված «յամին 1853 ի սուրբ Երուսաղէմ»[1], որի ձեռագիրը պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, 2734 թվահամարի տակ: Այս ձեռագրից XX դ. սկզբին կատարված մի ընդօրինակություն պահվում է Մատենադարանում 10659 համարի տակ: Հ. Զաքարյանի պատմության մեկ այլ արտագրություն՝ կատարված Մատենադարանի արխիվի նախկին վարիչ Հ. Աբրահամյանի ձեռքով, գտնվում է Մատենադարանում պահվող նրա անձնական ֆոնդում[2]:

Սույն աշխատության հեղինակ Հակոբ Զաքարյանի մասին քիչ բան է հայտնի: Անհայտ է նաև նրա ծննդյան թվականը, սակայն հեղինակը նշում է, որ իր նկարագրած դեպքերից «յոյժ սակաւուցն ի յետին ժամանակի ականատես լեալ» (էջ 376): Այստեղից կարելի է ենթադրել, որ նա ծնվել է XIX դարի 10-ական թվականներին: Հակոբ Զաքարյան Շուշեցին 1851-1865 թթ. եղել է Երուսաղեմի միաբան և այնտեղ 1853 թ. գրել «Պատմութիւն գաւառին Արցախու» պատմա-

---

[1] *Յակոբ սրկ. Զաքարեան*, Պատմութիւն գաւառին Արցախու, Մատենադարան, ձեռ. 2734, էջ 1: Այս երկի հրատարակությունը մեր առաջաբանով և ծանոթագրություններով տես *Մաղալեան Ա.*, Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը, «Հանդէս ամսօրեայ», 2006, թիւ 1–12, էջ 317–394 (այսուհետև շարադրանքում հղելու ենք այս հրապարակման էջերը):

[2] Մատենադարան, Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 259:

գրական երկը, 1860-1861 թթ. ընդօրինակել «Անտառ այլաբանութեան» գիրքը[3], 1862-ին ձեռնադրվել վարդապետ, իսկ 1865-ին՝ հրաժարվել միաբանությունից: Այլ տեղեկություններ նրա մասին չգիտենք:

Անցնելով Հ. Զաքարյանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատության ներկայացմանը, նախ նշենք, որ հայագիտությանը ոչ անհայտ Տ. Տեր-Գրիգորյանը «1940-ական թվականներին թարգմանել է այն ռուսերեն և տրամադրել Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտին, որտեղ և պահվում է 924 թվահամարի տակ, ձեռագիր վիճակում»[4]: Հետագայում այս աշխատությանը նվիրված հոդվածով հանդես է եկել Ռ. Տիտանյանը[5]:

Հակոբ Զաքարյանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը սկսվում է Արցախում վաչկատուն թուրքական ջիվանշիր ցեղի մի ճյուղի՝ սարջալլուների ցեղապետ Փանահ խանի հաստատման և Շուշիի բերդի վերակառուցման ժամանակներից: Այստեղ հեղինակը պարզորոշ ներկայացնում է Փանահի խորամանկ քաղաքականությունը հայերի նկատմամբ, որոնց մոլորեցնելու, պառակտելու, մի մասին իր կողմը գրավելու միտումով առերևույթ «բարություն, հանդուրժողականություն» է ցուցաբերել նրանց նկատմամբ՝ անտարակույս, հաշվի առնելով նաև Արցախի մելիքների զորությունը: Սակայն, հետագայում, ինչպես նշում է հեղինակը, երբ նրան հաջողվում է Արցախում ամրապնդել իր դիրքերը, ցույց է տալիս իր իսկական դեմքը: Հեղինակը չափազանց պատկերավոր է ներկայացրել Փանահ խանի՝ անառիկ մի վայրում բերդ ունենալու ցանկությանը Վարանդա գավառի տիրակալ Մելիք-Շահնազարի տված արձագանքը. «Կոչեաց խանն զմե-

[3] *Ն. Պողարեան*, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 8, Երուսաղէմ, 1977, էջ 298–299:

[4] *Ռ. Տիտանյան*, Նորահայտ նյութեր 1793–1795 թթ. Շուշի բերդի հերոսական պաշտպանության մասին, «ԼՀԳ», 1966, թիվ 9, էջ 29:

[5] *Ռ. Տիտանյան*, նշվ. աշխ., «ԼՀԳ», 1966, թիվ 9, էջ 28–41:

ծամեծս եւ զիշխանս յերկուց ազգաց, ասէ ցնոսա՝ կամիմ զի բերդ մի տալ շինել, բայց չգիտեմ տեղի մի ամուր եւ յարմար. յառաջեաց Շահնազարն եւ ասէ՝ ցուցից մեծութեանդ լեառն մի, որ արօրադիր է գեղջին Շուշոյ. բաց ի տեղոյն ոչ գտանէք յայլ ուրէք ամրագոյն քան զայն՝ եւ ըստ կամաց ձերոց յարմար շինութեան բերդաքաղաքի» (էջ 330): Այլ աղբյուրներից հայտնի է, թե ինչու էր Վարանդայի տիրակալը իր մելիքության տարածքում գտնվող այդ պաշտպանական ամրությունը ափսեի վրա մատուցում քոչվոր ջիվանշիրցուն, այստեղ կարևորն այն է, որ Հ. Զաքարյանն այս տողերը գրում էր Ռաֆֆու «Խամսայի մելիքությունները» երկի լույս տեսնելուց մոտ երեք տասնամյակ առաջ, ընդ որում՝ Երուսաղեմում, միանգամայն անծանոթ Անդրկովկասում այդ շրջանում գրված Միրզա Ադիգյոզալբեկի «Ղարաբաղ-նամե» և Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Ներսիսյանց) «Ճշմարտացի պատմություն» աշխատություններին: Այդ առումով այս տեղեկությունն ունի չափազանց կարևոր նշանակություն:

Այնուհետև Հ. Զաքարյանն անցնում է Շուշիի վերակառուցման աշխատանքների նկարագրությանը: Այդ մասին նա գրում է. «Եւ այսպէս յարիւն եւ ի քիրտն հայոց գոգցես կանգնեցան պարիսպք քաղաքին, եւ մեծաշէն ապարանքն խանին եւ ամենայն կազմուածքն, որ ի նմա»: Ապա հեղինակն ավելացնում է. «Յետ լրանալոյն շինութեան պարսպի եւ աշտարակաց բերդին անուանեցին բերդաքաղաք Շուշի, զի վայրն այն, որպէս յիշեցաք, ագարակ է գեղջին Շուշոյ, վասն այնր անուամբ գեղջին յորջորջեցին զքաղաքն» (էջ 331–332):

Կարևոր նշանակություն ունեն նաև Շուշիի բնակիչների մասին Հ. Զաքարյանի հաղորդած տեղեկությունները. «Եւ մինչեւ ցայսօր ժողովուրդն Շուշոյ՝ որք յազգէս մերմէ են՝ բաժանին ի չորիս թաղս կամ վիճակս՝ ագուլեցիք, ղազանչեցիք, մեղրեցիք եւ բուն ղարաբաղցիք» (էջ 382): Հայտնի է, որ երնջակ գավառի Շահկերտ (Ղազանչի) ավանի բնակիչներից շատերը 1750 թ. Նախիջևանի Հեյդարկուլի խանի զորքի դեմ

մղած հերոսական պայքարից հետո հեռացել են Ղափան, իսկ հետագայում տեղափոխվել Շուշի[6]: Ագուլեցի վերաբնակիչները Շուշիում էին հաստատվել Ազատ խանի կատարած ավերածություններից հետո: Մեկ այլ, ավելի սակավամարդ գաղթականություն էլ Շուշի էր գնացել Մեղրիից: Նրանք Շուշիում բնակություն են հաստատել հայրենակցական սկզբունքով, իսկ նորաստեղծ թաղերը կոչել իրենց նախկին բնակավայրերի անուններով: XVIII դարի 80-ական թվականներին այդ հասարակությունների տարբերությունները դեռևս այնքան զգալի էին, որ Շուշիի հայ բնակչությանն իր հայրապետանալն ավետող 1780 թ. դեկտեմբերի կոնդակը Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցին հասցեագրել էր «ի վերայ համայն նախիջևանցի, ղազանչեցի, աստապատեցի և այլ ամենայն ժողովրդոցն, որք ի դղեակն Շուշու զետեղեալ գոն»[7]: Ինչ վերաբերում է Շուշիում բնակություն հաստատած ղարաբաղցիներին, ապա նրանց մեջ մեծ թիվ էին կազմում Մելիք-Շահնազարի հպատակները՝ վարանդացիները: «Այսպիսով, կազմվեց մի քաղաքային համայնք՝ չորս իրարից տարբեր տարրերից, որոնք պահպանում էին իրենց տեղային առանձնահատկությունները»[8]: Եվ հենց այս չորս հասարակությունների բնակիչներն էլ ձևավորեցին ապագա շուշեցու դիմագիծը:

Ուշագրավ են նաև Շուշիի եկեղեցիների մասին Հ. Զաքարյանի բերած տեղեկությունները: Այն ժամանակ, երբ Հ. Զաքարյանը գրում էր այս երկը, Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին (1868-1887) դեռևս կառուցված չէր, և հեղինակը որպես իր քաղաքի ամենամեծ եկեղեցի է հիշատակում 1822 թ. կառուցված Ագուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցին: «Առաջին եւ հոյակապն է Ագուլեցոցն՝ կառուցեալ յանուն ամենասուրբ Աստուածածնայ»,– գրում է նա (էջ 332–333):

[6] *Մ. Չամչեանց*, Հայոց պատմութիւն, հ. Գ, Ե., 1984, էջ 848:

[7] Դիվան հայոց պատմության. Նոր շարք, գիրք Ա, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, աշխ.՝ Վ. Գրիգորյանի, Ե., 1984, էջ 173:

[8] *Լեո*, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 272:

Այս մասին հաջորդում է «Պատերազմ շահին ընդ խանին Ղարաբաղու» գլուխը[9], որտեղ խոսվում է նախ Սուլեյման սարդարի գլխավորությամբ 1793–1794 թթ. Արցախ ներխուժած պարսկական զորքերի պարտության, այնուհետև Իրանի Աղա Մուհամմադ խանի[10] անդրկովկասյան արշավանքների, նրա սպանության և պարսկական բանակի խուճապահար փախուստի մասին: «Եւ ով կարէ պատմել, թէ որպէս ի միում ժամու այնչափ անթիւ զօրք նորա որպէս փախեան,-գրում է Հ. Զաքարյանը,- թողեալ զզէնս եւ զամենայն պատերազմական գործիս եւս եւ զդի շահին իւրեանց» (էջ 354): Այստեղ հեղինակը հավատարիմ է մնում պատմական իրականությանը, իսկ Ատրպատականի Սուլեյման սարդարի՝ Արցախ արշավելու վերաբերյալ Հ. Զաքարյանի տեղեկությունների իսկությունը ոչ միայն հաստատվում է ռուս պատմաբան Պ. Բուտկովի տվյալներով[11], այլև Սուլեյման սարդարի՝ «1793-1795 թթ. Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ վարած բանակցությունների ու նրա կատարած հետախուզական արշավանքների մասին պատմագրությանը հայտնի փաստերին Հակոբ Շուշեցին ավելացնում է շատ նորություններ ու մանրամասնություններ, որոնց չենք հանդիպում մասնավորապես հայկական սկզբնաղբյուրներում»[12]: Ապա թռուցիկ ներկայացվում է Վրաստանի միավորումը Ռուսաստանին: Այս հատվածի վերջում հեղինակը ներկայացնում է Քյուրակ-չայի պայմանագրի կնքումը, որը տեղի է ունեցել 1805 թ. մայիսի 14-ին[13], սակայն սխալմամբ որպես պայմանագրի կնքման վայր է նշում Թիֆլիսը:

[9] Այս գլուխը հրատարակել է Ռ. Տիտանյանը իր կազմած «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795–1797 թթ.)» գրքում, Ե., 1981, էջ 205–222:

[10] Նրա մասին տե՛ս Жизнеописание Ага-Магомет-Хана Каджара. СПб., 1835.

[11] *П. Бутков*, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год. ч. II. СПб., 1869, с. 326-327.

[12] *Ռ. Տիտանյան*, նշվ. աշխ., «ԼՀԳ», 1966, թիվ 9, էջ 34:

[13] АКАК, т. II, Тифлис, 1868, с. 705.

Այնուհետև, առանց ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմին անդրադառնալու, հեղինակն անցնում է ռուս-պարսկական հաջորդ պատերազմի որոշ ուշագրավ դրվագների ներկայացմանը: Այդ մասը, որը կրում է «Յաղագս վիպասանութեան. յայտարարութիւն գործեալ իրաց Հայկազն Մատաթեան Յոհաննէս սպասալարի ռուսաց» վերնագիրը, նվիրված է զորավար Վալերիան Մադաթովի (Ռոստոմ Մադաթյան, 1782–1829) քաջագործությունների ներկայացմանը 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում[14]: «Անդրկովկասյան կորպուսի հրամանատար գեներալ Ա. Երմոլովը, որը մեծապես գնահատում էր Վ. Մադաթովի ռազմական փորձառությունը և անձնական քաջությունը, նրան նշանակեց հրամանատար այն ջոկատի, որը պիտի շտապեր կասեցնելու Աբբաս Միրզայի բանակի առաջխաղացումը»[15]: Այստեղ հեղինակը վիպական շնչով պատմում է 1826 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Շամխորի հաղթական ճակատամարտի, Գանձակի գրավման և գեներալ Վ. Մադաթովի իրականացրած ղարադաղյան արշավանքի մասին: Ե՛վ Հ. Զաքարյանը, և՛ XIX դարի պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովն իր «Ճշմարտացի պատմություն» երկում ոչ քիչ էջեր են նվիրել զորավար Վ. Մադաթովի գործունեության ներկայացմանը[16]: Սակայն, եթե Միրզա Յուսուֆ Ներսեսովը, գտնվելով Արցախ ներխուժած Աբբաս Միրզայի քեռու՝ Ամիր խան սարդարի զորաբանակում, հանգամանորեն ներկայացնում է պարսկական բանակում տիրող իրավիճակը, ապա Հ. Զաքարյանն իր հերթին մանրամասնորեն նկարագրում է Վ. Մադաթովի մարտավարական հնարքները Շամխորի ճակատամարտում, որոշ լրացումներ ավելացնելով գոյություն ունեցող պատմական գրականությանը:

Այս մասին հաջորդում է «Յաղագս պէսպէս վիպասանութեանց: (Այլ պատմութիւն): Պատմական վիպասանութիւն» վերնագիրը կրող մի հատված, որտեղ ներկայացված է հայ մարտիկ Պետրոս Չարքազովի սխրանքը Կովկասյան պատերազմում:

Աշխատության վերջում տեղ է գտել առաջին մասի մի ստվար հատվածի լրամշակված և խմբագրված տարբերակը, որը հեղինակը պայմանական նշանով և «տե՛ս երես 10, շարունակութիւն կրկին նախագիծ օրինակն գործոյս, այս նշանն և լից զպակասութիւն պատմութեանս, որ անդ կայ» գրությամբ մուծել է առաջին գլխի մեջ: Ըստ երևույթին, հեղինակը մտադիր է եղել ընդարձակել իր պատմությունը, սակայն հասցրել է անել միայն այդքանը:

Վերջում նշենք, որ Հ. Զաքարյանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը զերծ չէ նաև փաստական որոշ սխալներից: Այսպես, Փանահի խանության սկիզբը հեղինակը համարում է 1780 թվականը, մինչդեռ նա, համագործակցելով Վարանդայի Մելիք-Շահնազար Բ-ի հետ, վերջինիս թողտվությամբ դեռևս 1752-ին էր հաստատվել Արցախի սրտում: Այնուհետև, ինչպես իրավացիորեն նկատել է Ռ. Տիտանյանը, «Շուշեցին ոչինչ չի ասում պատմական այն իրողության մասին, որ 1795 թ. ամռան վերջին, երբ Աղա Մուհամմադ խանին չի հաջողվում գրավել Շուշին, նա Արցախում թողնում է փոքր զորախումբ՝ պաշարումը շարունակելու նպատակով և ինքը հիմնական զորքով անցնում Վրաստան, գրավում և ավերում նրա մայրաքաղաքը: Չի ասված նաև այն մասին, որ Աղա Մուհամմադ խանի հրոսակները Թիֆլիսն ավերելուց հետո որոշում են ձմեռել Մուղանի դաշտում՝ գարնանը պատերազմական գործողությունները վերսկսելու միտումով և թե ինչպես ռուսական զորքերի՝ դեպի Անդրկովկաս շարժվելուը հարկադրում է Աղա Մուհամմադ խանին թողնել Մուղա-

[14] Այդ մասին մանրամասն տե՛ս Кавказцы или подвиги и жизнь замечательных лиц, действовавших на Кавказе. Жизнеописания ген.-л. В. Мадатова и ген.-м. Бурцова. СПб., 1859, с. 30–46, Կեանք գեներալ-լէյտենանտ կնեազ Մատաթովին, Շուշի, 1870, էջ 78–119, Жизнь ген.-л. князя Мадатова. СПб., 1874, с. 91–139.

[15] *Վ. Թերզիբաշյան*, Գեներալ-լեյտենանտ Վ. Մադաթով, Ե., 1942, էջ 15:

[16] *Միրզա Յուսուֆ Ներսեսով*, Ճշմարտացի պատմություն, Ե., 2000, էջ 105–137:

նը և վերադառնալ Պարսկաստան»[17]: Հ. Զաքարյանը հազվադեպ է նշում նաև իր նկարագրած դեպքերի տարեթվերը:

Իսկ զորավար Վ. Մադաթովի գործունեության նկարագրության մեջ որոշ դեպքերում նկատվում են իրադարձությունների հաջորդականության խախտումներ: Այսպես, Գանձակի գրավումը, որը տեղի է ունեցել 1826 թ. սեպտեմբերի 4-ին[18], ներկայացվում է 1826 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Շամխորի ճակատամարտից առաջ: Իսկ պարսից բանակը դեպի «բարեբեր կողմանս վերին հայոց»[19] «զբոսանքի» էր, այլ նրա ավագ որդի, թագաժառանգ Աբբաս Միրզան:

Սակայն, այս ամենին զուգահեռ պետք է նշել, որ Հ. Զաքարյանը «բերում է Շուշի բերդաքաղաքի պաշտպանության հետաքրքրական մանրամասնություններ, որոնք բայնպիսի ցակայում են հայկական մյուս աղբյուրներում, մի հանգամանք, որ առավել գնահատելի է դարձնում Հ. Շուշեցու «Պատմութիւնը»[20]: Իսկ Հ. Զաքարյանի աշխատության մեջ առկա որոշ թերությունները, որոնք ամենևին էլ չեն նսեմացնում այս պատմագրական երկի արժեքը, թերևս առաջ են եկել իր նկարագրած դեպքերը հիշողությամբ վերարտադրելու պատճառով: Նկատենք նաև, որ հեղինակը ընթերցողների ներողամտությունն է հայցել իր երկում տեղ գտած հնարավոր անճշտությունների համար. «Զոր ինչ պատմեցաք եւ ունեմք պատմել զգաւառէս ի լսելոց անտի ի հաւուց կամ ի հարց մերոց՝ զորս ի յիշողութեանս իմում մնացեալն էր ի բազմաց սակաւագոյնս գրեցի՝ խնդրեմ ներել, վասն զի քանի մի անուանք ի պատմութեանս փոխարկեալ են ի յատկութենէ իւրեանց. ի

[17] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 21:
[18] Տե՛ս АКАК, Тифлис, 1875, т. VI, ч. II, с. 374:
[19] Մատենադարան, ձեռ. 2734, էջ 15բ:
[20] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 20, նաև՝ *Պ. Չորբանյանի* գրախոսությունը Ռ. Տիտանյանի կազմած գրքի մասին, «ԼՀԳ», 1982, թիվ 6, էջ 100:

յիշողութեամբ լինելոյ զգործս եւ զանցս, որ ընդ նոսա՝ օտար անուամբ, յորջորջեցի զնոսա» (էջ 356):

Հ. Զաքարյանի «Պատմութիւնն» ընթերցելիս երևում է, որ նա գրողի ձիրք է ունեցել: Դա նկատվում է հատկապես պատերազմական տեսարանների՝ նրա պատկերավոր նկարագրություններից, երբ հեղինակի գրիչը պարզապես վերածվում է թշնամուն հայրենի երկրից վտարող մարտիկի: Նրա աշխատությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

Ամփոփելով՝ նշենք, որ Հակոբ Զաքարյան Շուշեցու պատմությունը, չնայած որոշ ակներև չափազանցություններին, Վարդան Օձնեցու «Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու»[21] և Առաքել Կոստանյանցի երկհատոր «Պատմութիւն Արցախի»[22] աշխատությունների հետ մեկտեղ կարևոր սկզբնաղբյուր է Արցախի XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմության համար:

[21] Մատենադարան, ձեռ. 4331:
[22] Մատենադարան, ձեռ. 7822, 7823: